

Ե Ղ Ի Ա Տ Է Մ Ի Ի Ջ Ի Պ Ա Շ Ե Ա Ն Ի

Ա Ն Տ Ի Պ Ն Ա Մ Ա Կ Մ Ը (1)

ԱՌ ՇՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

Սիրեցեալ եղբայր,

Ոմանք բարեկամութեան համար կը ծնին եւ անշուշտ ամեն մարդ սիրոյ համար: Բարեկամութիւն բառն անտարակոյս, իրրեւ բարեյօդ ամեն բան, ահանջիս քաղցր կը հնչէ յաւէա. սակայն ինքզինքս բարեկամութեան համար ծընած չեմ զգար: Անկեղծօրէն խօսելով, բարեկամ մ'ունեցայ սակայն, կամ աշխարհ աշնպէս դատեց թէ բարեկամ էինք իրարու: Ծշմարտութիւնն ա՛յն է թէ, բարեկամի պէտք չեմ զգացած ու չեմ զգար այսօր ալ: Տան մէջ գրքերս ունէի կամ պարտէզիս ածուն, եւ երբ գրենոյս կամ ծաղկատունկերուս վրայ հակէի, ա՛լ ոչինչ եւ ոչ ոք կը փնտռէր - բաց ի Աննիկէն: Նա, որ իմ բարեկամս նկատուեցաւ, աշնպէս չէր, միշտ մէկուն պէտք ունէր. եթէ ես չէի, ուրիշն էր: Քեազըտխանէ երթալու համար ամեն Մայիս մէկին կուգար զիս կը գրանէր. անգամ մը կը յիշեմ մերժեցի ընկերանալ իրեն եւ այլ եւս չեկաւ: Երբ պառոյտի ելնեմ, սիրտս կը դողայ որ մէկը դայ կցուի ինձ ճամբան, միշտ

վայրենի, միշտ մինակ. իսկ երբ որ չուզեմ առանձին շրջագայիլ, կ'ուզեմ թեւս ունենալ տարասեռ հակ մը. սիրելու համար ծնած եմ ես. եւ, աւա՛ղ, աշնքա՛ն հակներ սիրելուս հակառակ չը գտայ կին մը, որ զիս կատարելապէս հասկնար, որ ինձ յարէր, որ սիրուհիս ու տիրուհիս ու բարեկամուհիս ըլլար, որուն մէջ արձագանդ գտնէին խանդավառ հոգեզուամներս ու լռին մտածումներս:

Քանի՜ որ կենաց կամ գէթ հոգեկան կենաց մշտահաղորդ ընկերուհի մը չը տրուեցաւ ինձ գտնել, քանի՜ որ սրտիս անծանօթ է գրեթէ բարեկամական ըզգացումն ինձ սեռակից անձի մը նկատմամբ, եղբօր մը պէտք ունիմ՝ որուն հոգւոյս յուզումներուն ու կենացս իրողութիւններուն վրայ տեղեկութիւն տամ երբեմնակի կամ պարբերաբար, թէ՛ ըսփոփուելու համար եւ թէ՛ ... գերեզմանիս վրայ ծանօթութեամբ իրաց խօսելու համար: Եւ կը խորհիմ, Հրանտ իմ, որ եղբօրս կարօտէն ի վեր եղբայրական խանդաղատանք եւ ոչ մէկուն համար աշնքան զգացած է սիրտս որքան քեզ համար: Գորով կը ներշնչէ բոլոր անձը, եւ կենացս հրապարակային վրկայն հանդիսանալու բոլոր հանգամանքները կը միացնես յանձինդ: Եւ... արդեօք պիտի ձանձրանայի՞ր եթէ գա-

1) Այս յուզիչ նամակին բնագիրը մեզի հաղորդեց Պ.Թորոս Ազատեան:

Ծ. Խ.

յի երբեմնակի համարաուղթիւնն ընել գործքերուս եւ ... անգործութեանս:

Նախ, որովհետեւ ինձ փոխատուութիւն ընել ուզելու չափ փափկութիւն ունեցար, յայտնեմքեզ թէ կիրակի Պիւլիւքաէրէ գացի եւ մօրաքրոջմէս ըստացայ եռամսեայս՝ հինգ ոսկի: Փութացի տանտիրուհւոյս հատուցանել Մայիս (ըստ Եւրոպացւոց) 20էն մինչեւ Յունիս 23 եւ նոյն թուականէն մինչեւ Յուլիս 23 սենեակի վարձք երկու օսմանեան ոսկի: Եւ որովհետեւ խորհուրդ տրւիւր ինձ մնալ այս տունս մինչեւ (եթէ կարենամ յաջողիլ) ճամբորդութիւնս, Յուլիս 23էն մինչեւ Օգոստոս 23 ալ վրձարեցի սենեակիս համար: Թէլլալը Նշան Թաշի Մխիթարեանց վանքի պարտէզին վրայ նայող սենեակի մը խօսքն ըրած էր ինձ. փորձուեցայ թէ եւ հոն փոխադրուիլ, սակայն մէկ կողմանէ տրւած խորհուրդդ ու միւս կողմանէ տանտիրուհւոյս սրտայոյզ ընդդիմութիւնն հեռացուցին մտքէս վանքի պարտէզի մը վրայ նայող սենեակի մը բնակութեան սխրալի հեռապատկերը: Սաղազ խորհրդական կեանքի մը պէ՛տք ունի հոգիս. միայն թէ հալածանքն՝ որուն դուն ալ համոզուեցար՝ չը՞ պիտի եղձանէր Բանկալիի բնակարանին խաղաղութիւնն, եւ այս առանձնարանս չը՞ պիտի փնտռել տար ինձ՝ հակառակ վրդովումներուն որոնց մատնուած են հոս հողիս ու մարմինս: Երեք ոսկիէն զատ, զորս վարձքի համար վճարեցի տանտիրուհւոյս, երկու ամսուան լուացքի եւ նախաճաշի համար հատուցի 50 դահեկան (հաշիւը 47 դահեկան էր). 20 դահեկան ալ վնասուց համար զորս կարասեաց պատճառեցի կամ պատճառուեցաւ, քանի որ այցելուներ ունեցայ անպակաս՝ մանաւանդ սկիզբները. 15 դահեկան ծախք՝ տանտիկնոջս ուսեստային նուէր եւ ինձ կռիւէն պանիր ցերեկները

ուտելու համար. կիրակիէն ի վեր իրիկուան ճաշի ծախք 10 դահեկան. վրաս քանի մը զրուշ մնացած կայ, եւ չորրորդ ոսկին այսպէս հալեցաւ: Մէկ երկու օրէն հինգերորդ ոսկին պիտի աւրեմ՝ իրիկուան ճաշի ծախք ընելու ու կիրակի ցերեկներն ինձ տուած ճաշի եւ երբեմնակի նուիրած պտուղներուն փոխարէն կերակրային նուէրներ ընելու համար տանտիկնոջս. եւ որովհետեւ յառաջիկայ ամսազլխուն օսմանեան Պանդան ունեցած յիսուն ոսկւոյ դումարիս տոկոսը՝ 150 դահեկան կը ստանամ, ու Տպարանէն ալ ամիսն անգամ մը 60 դահեկան, կը յուսամ որ մինչեւ Հոկտեմբեր 1, ուր եռամսեայս մօրաքրոջմէս կը ստանամ՝ ապրիմ առանց պարտք ունենալու ինչպէս որ չունեցայ մինչեւ այսօր – բաց ի՛ առանց իմ ուզելուս՝ Մատամ Նիսընէն ցերեկներն ինձ տրուած կարագով հաւկիթի ճաշի փոխարէն (ամիսը կէս ոսկիէն հաշուելով) 2 ոսկւոյ պարտքէս, զոր պիտի փութայի վճարել եթէ souscriptionը կատարուէր:

Քանի որ souscriptionի խօսքը կ'ըլլայ, երեքշաբթի Պիւլիւքաէրէէն իջնելուս Եէնի գիւղ հօրեղբորս տունն հանդիպեցայ ու Սեպուհը տեսայ: Կը թուի թէ երբեք առիթը չը պիտ' ունենայ հանգանակութեան թուղթն Աբիկ էֆէնտիին ներկայացնելու: Կ'աղաչեմ, եղբա՛յրս, այլ եւս մի՛ հետապնդեր այդ ձեռնարկին: Տիկին Այվազեանն ալ երբ տեսնես, խնդրէ իրմէն իմ կողմանէս որ սիրտ չը հատցնէ այդ գործին համար: Սիրտ բառն ստորագծեցի, որովհետեւ ազնուասիրտ ու տաղանդաշատ այդ խանդավառ աիկինն սկիզբէն ի վեր սիրտ ունեցած է ինձ համար. եւ ես յաւիտեան տիկին Այվազեանին համար երախտապարտ սիրտ մը պիտի կրեմ կուրծքիս ետեւ: Իսկ դուն որքա՛ն յոգնեցար, որքա՛ն հոգ

տարիք, եղբայրս, իմ եւ ազգային դպրութեանց օգուտը տեսնելով այդ հայ յեզուի Առձեռն Բառարանի հրատարակութեան մէջ: Երբեք չը պիտի մոռնամ շրած ձեռնարկներդ, թէեւ աւա՛ղ ապարդիւն եղան. իսկ ինձ այդ բարեվախճան կամ բարենպատակ գործին առթիւ ըրած այցելութեանդ միջոցին մեր քաղցրը խօսակցութեանց տպաւորութիւնը դեռ հոգւոյս վրայէն ջնջուած չէ: Եթէ նորէն այցելութեան գաս, աւելորդ է բսել, տեղեկութիւն չը պիտի սպասեմ Բառագրքի գործին վրայ: Հայ ազգէն արդէն այդպիսի ձեռնտուութիւն մը չէի սպասեր, որովհետեւ... հայ ազգին շատ աւելի ծառայած էի քան այդպիսի ձեռնտուութեանց արժանացած անձեր: Բարի մօրաքրոջս եռամսեայ հինգ ոսկին Տպարանին ամսական երեք մէծիտին հետ կը բաւեն իմ ապրուստին: Թէեւ շարաթիւս առ առաւելն երկու անգամ կարենամ միս ուտել ու մտաւորական պիտոյից համար շարաթը քսան փարայ խարձել միայն Petit Parisien մ'առնելով: Այսու մօրաքրոջս սողիւտ մ'ընել չեմ ուզեր, որովհետեւ խեղճն իր եւ ամուսնոյն գաւառարնակ ազգականաց հասնելու համար ինքզինքէն կը զրկէ. ո՛չ ալ իմ սիրելի ազգիս երեսին նետել ապերախտութիւն բառն: Երկու անխիղճ մարդիկ հերիք են ամբողջ ժողովուրդ մը մոլորեցնելու համար եւ իմ պարագայս այս եղած է դժբաղդաբար: Անցեալ շաբթու դիպուածով իմացայ Կեդրոնական Վարժարանի դասերս ինձ վերստին չը յանձնուելուն բուն պատճառը. երկու Հայ եղբայրակիցներ՝ հացս ձեռքէս առնելու եւ Հայ ժողովրդեան սրտին մէջէն զիս գահճնկէց ընելու համար՝ կառավարութեան հասկցուցեր են թէ... երիտասարդութիւնը կը մոլորեցնեմ: Կը յիշեմ որ աշակերտներէն ոմանք, Խաներու կեանքին ամէն երե-

ւոյթներուն ընտել, մազերուս ներկին եւ երեսիս գաւթին ակնարկութիւններ իրենք իրենց նետեցին վերոգրեալ ազգավաճառ եղբայրակիցներէն դրդեալ: Այնքա՛ն ամաց ուսուցչական պաշտօնավարութեանս միջոցին ո՛վ որ կրնայ մէկ անխոստովանելի գործս ապացուցանել, թո՛ղ յառաջ անցնի. ես ահա ձեռքս խրդճիս վրայ եւ առաջի Աստուծոյ կը յայտարարեմ թէ՛ սիրուհւոյ մը համար եւ ճաշակազիտական զգացմամբ անձս յարգարած եմ միշտ: Ես այս մոլութեամբ իրօք ախտացեալ ոմն եթէ եղած ըլլայի եւ ազգային գործիչութիւնն եթէ արհեստ ըրած ըլլայի, թերեւս կամ մանաւանդ հաստատապէս ազգային վարժարանաց եւ ուրիշ հաստատութեանց մէջէն ոչ ոք երբեք ոտքս պիտի կրնար դուրս հանել: Բայց... կը ներեմ թշնամիներուս եւ կրամ զրկանացս ու տառապանացս համար փառք կուտամ Անոր, որուն մեծութիւնը կը զգամ այլ որուն խորհրդոց չը կրնար սահմանափակ իմացականութիւնս թափանցել:

Գոնէ ամիսն անգամ մը եկուր ինձի, Հրա՛նա: Հիմայ անշուշտ աւելի կը ճանչնաս զիս, թէեւ ինձ նկատմամբ երբեք գէշ խորհած չես կրնար ըլլալ, հիմայ որ չուզեցի ժամագրութիւնդ ընգունիլ, ոչ ալ երկու մէծիտի վարձքը զոր հէք գաւառացի ուսուցիչ մը կը բերէր ինձ՝ երկու նիստի մէջ իր մէկ աշխատասիրութեան վրայ ըրած դիտողութեանցս փոխարէն: Մարդիկ կան որոնք, աղքատիկ կեցութեանս գիտակ, զիս բարեւել չեն ուզէր իսկ, վախնալով որ իրենցմէ փոխ ստակ կամ նպաստ կ'ուզեմ, մինչ ես ոչ միայն իմ քառասունեւվեցամեայ կենացս մէջ մա՛րդէ փոխ ստակ ուզելս չեմ յիշեր այլ եւ այդ մասին զիս բարոյասպէս անկարող կը զգամ: Իսկ ի՞նչ անբաղդատելի հաճոյք կը գտնեմ մարդասիրական զգացմանցս գոհացման

մէջ: Բարէ՛, վերածուեցաւ վերածուեցաւ նիւթական կարողութիւնս մինչեւ լուցկի վաճառող ամօթղած մուրացիկներու տասը փարայի փոխարէն տուած լուցկին իրենց ընծայելու աստիճանին: Բայց եթէ այդ հաճոյքի նուազագոյնն ալ ինձ գլացուէր...

Եկո՛ւ, Հրա՛նտ, բոլոր ազգականներուս ի միասին տեղը պիտի բռնես, իբրեւ եղբայր մը՝ որ մտաւոր ու հոգեկան բոլոր բարեմասնութիւններով օժտուած է, որ խանդաղատանքի պէտքին հետ գաղափարաց փոխանակութեան կամ հոգեկան հաղորդակցութեան պէտքն ալ կը լեցնէ, եւ որուն ուրիշ նեղութիւն չը պիտի տամ բայց միայն կենացս

համարատուութեան ունկնդրութիւնն՝ եթէ սակայն առ այս զիս արտօնէ: Ընտանեգութիւն մարդը զոնկ եղբոր մը պէտք ունի, եւ արդարը վկայի մը որ իր մահուընէ ետքը վկայէ իր արդարութեան, իր կրած ձրի հալածանացն անըմբռնելի...: Գէթ ամիսն անգամ մը տեսնուինք, սիրելի եղբայրս: Իսկ ես, եթէ չը ձանձրանաս, աւելի յաճախ գրեմ քեզի՝ ուրիշ ժամանակ նուազ ձանձրացուցիչ նիւթի վրայ կամ աւելի փոփոխ:

Քոյդ

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

4 յուլիս 1896

ՎՃՌԱՐԵԿՈՒՄ

Կի՛րֆ, կը դառնամ ես քեզի հոգեվարքի զրդջումով...
«Մահավընիո»ըդ գրքոյ մատներըս սա մեղապարտ
Քըբքըրեցին գայն շերտ շերտ ու նետեցին հովէ հով.
Մեռա՛ գահըդ ուրացող արիամարիանքըս հըպարտ:

Մարմինըս, գերծ կըրակէդ, եզաւ հարակ որդերու...
Հանդարտութիւնն անկեղան՝ նեխեց իմ մէջ ամէն բան.
Օրերս ինկան իմ վըրայ երկաթաթեւ գերդ ուրու,
Ու խորաններըս նախկին դարձան դատարկ դամբարան:

Կի՛րֆ կեցողանի, ըստեղծո՛ղ, դո՛ւն՝ նախամայրն արուեստին,
Դո՛ւն՝ կենսայորդ ջերմութիւն ու հեթանոս նոր արեւ,
Վառէ՛ խարոյկդ հըրաբիր՝ հիւսուած քներուս մէջ կըրկին:

Կ'երկըրպագեմ արդ քեզի հաւատափոխ մը իբրեւ...
Քեզի ընծայ թող ըլլան, որ դուն իմ մէջ բընակիս,
Տարիքիս ոյժը ամբողջ ու խեղութիւնն արիւնիս:

ՍԱՐԳԻՍ ՄԵՀԵԱՆ

Պրումմանա, 23 նոյ. 1931